5488

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«14» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 124-25

Նախաձեռնող՝ *«ՆԱԶԱՐՅԱՆ ՔՈՒԼԻՆԳ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ*
ք.Երևան, Գ. Մահարի փ. , արտ. 1 շենք

Գործունեությունը՝ *Բագրատունյաց 67 հասցեում բետոնի արտադրամասի կառուցում*
ք. Երևան

Առդիր՝ 3 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 124-25

«14» 05 **2025թ.**

Երևան քաղաքի Բագրատունյաց 67 հասցեում նախատեսվող բետոնի արտադրամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՆԱԶԱՐՅԱՆ ՔՈՒԼԻՆԳ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/նախագիծ
Գործունեության տեսակը՝	«Ա» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Երևան, Բագրատունյաց 67

Ներածական մաս. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացված հաշվետվությամբ՝ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց 67 հասցեում: Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է արդյունաբերական գոտում՝ Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի՝ 7-րդ կետի «ե» ենթակետի նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել՝ կառուցապատման նախագծային փաստաթղթերը, համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները, հողատարածքների սեփականության վկայականը՝ N 01-011-0392-0164 և Երևան համայնքի կողմից տրամադրված նախագծման թույլտվությունը՝ N 01/18-01-59-24՝ տրված՝ 12.02.2024թ.: Հողամասի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերական օբյեկտների:

Նկարագրական մաս. Բետոնի արտադրամասի կառուցումը նախատեսվում է իրականացնել 0.53218 հա մակերեսներով հողատարածքում: Մոտակա բնակելի թաղամասը գտնվու է 840-950 մետր հեռավորության վրա: Հարակից տարածքները ևս արտադրական են, առկա են պահեստային շինություններ: Ըստ հաշվետվության տարածքը ամբողջությամբ կառուցապատված է: Տարածքում առկա են ենթակառուցվածքներ և տարբեր շինություններ մասնավորապես՝ պոմպակայան, ջեռուցման կայան, էլեկտրական ենթակայան, վարչական մասնաշենքեր,

պահակատուն, բոքսեր, հանգստյան շենք, ամրանային հին կայան, ինքնակամ կառուցված շինություններ և ծածկ: Շինարարության փուլում նախատեսվում է քանդել 1960-ական թվականներին կառուցված արտադրական 5 շինությունները՝ պոմպակայան, ամրանային հին կայաններ, ինքնակամ կառուցված շինությունները և սալիկապատ հատակները:

Արտադրական տարածքում նախատեվում է տեղադրել Liebherr-Mischtechnik GmbH գերմանական ընկերության արտադրության բետոնահանգույց, կառուցել պարսպի մի մասը և նոր ծածկ՝ մետաղական կմախքով: Բետոնահանգույցի կազմի մեջ մտնում են ցեմենտի սիլոսներ, բետոնախառնիչ, ավազի պահեստ, խճի պահեստ, կառավարման վահանակ և ջրի պահեստավորման ստոգետնյա բաք: Բոլոր սարքաերը գտնվելու են ծածկի տակ՝ բացառուցյամբ ցեմետի սիլոսների: Արտադրության համար որպես հումք օգտագործվելու է ավազ, խիճ, ցեմենտ և ջուր: Բետոնի արտադրողականությունը ըստ հաշվետվության լինելու է 120 խմ/ժ, տարեկան 312 օր աշխատանքային ռեժիմով, աշխատակիցների թիվը 35 մարդ:

Պատճառաբանական մաս. Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին օրենքի 17-րդ հոդվածի 9-րդ մասի՝ փորձաքննության ընթացքում կատարվել են տեղազննման աշխատանքներ և դիտարկումներ Երևան քաղաքի Բագրատունյաց 67 հասցեում՝ առկա վիճակի և «ՆԱԶԱՐՅԱՆ ՔՈՒԼԻՆԳ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող բետոնի արտադրամասի կառուցման հաշվետվությամբ ներկայացված տեղեկատվության համապատասխանությունը պարզելու նպատակով:

Տարածքի տեղազննման աշխատանքների և դիտարկումների արդյունքում պարզվել է, որ տարածքի առկա վիճակի և ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացված տեղեկատվության միջև առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.

1. քանդման ենթակա շինություններն արդեն իսկ քանդված էին,
2. նախատեսվող գործունեության տարածքում տեղադրված է նոր բետոնհանգույց, տեղում փաստացի իրականացվում էր բետոնի արտադրություն և առաքում, ինչն անթույլատրելի է, քանի որ Երևան քաղաքի Բագրատունյաց 67 հասցեում նախատեսվող բետոնի արտադրամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը որպես նախատեսվող գործունեության փաթեթ ներկայացվել է փորձաքննության:

Փորձաքննության արդյունքում պարզվել է, որ ՇՄԱԳ հաշվետվությունում և կից ներկայացված նախագծային փաստաթղթերի միջև առկա են անհամապատասխանություններ՝ գործունեության տարածքի առկա վիճակի, տարածքում իրականացված աշխատանքների և այլնի վերաբերյալ /նախագիծ, իրադրային սխեմա, գլխավոր հատակագիծ և այլ փաստաթղթեր/:

ՇՄԱԳ հաշվետվության բովանդակային անճշտությունների և անհամապատասխանությունների վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով՝ շրջակա միջավայրի նախարարության №5/26.21/4008 գրությամբ ներկայացվել է

«ՆԱԶԱՐՅԱՆ ՔՈՒԼԻՆԳ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ին, սակայն, մինչ օրս ընկերության կողմից չի ներկայացվել պատասխան գրություն՝ համապատասխան հիմնավորումներով:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի՝ գնահատումը և փորձաքննությունը կատարվում են մինչև նախատեսվող գործունեության իրականացումը, ինչը չի ապահովվել ընկերության կողմից:

Փորձաքննական գործընթացում բացահայտված բոլոր անհամապատասխանությունները և ոչ հավաստի տեղեկատվությունները հաշվի են առնվել պետական փորձաքննական եզրակացության կազմման ժամանակ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով վերոնշյալ փորձաքննական հիմնավորումները և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը և 13-րդ հոդվածի 1-ին մասը ՝ «ՆԱԶԱՐՅԱՆ ՔՈՒԼԻՆԳ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Երևան քաղաքի Բագրատունյաց 67 հասցեում նախատեսվող բետոնի արտադրամասի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Սուսաննա Անտոնյան